ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ղուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Դրանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ
)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
—
Գրութիւնք ետ չեն տրուիր
)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տարին լրանալու վրայ է. կը խնդրենք մեր բաժանորդներէն որ շտապին մեզ հասցնել իրենց բաժնեգինները. նոյնպէս և այն գործակալներէն որոց քով կը գտնուին գանձուած դրամներ, նաեւ աշխատին անյապաղ դանձել. կը կարծենք թէ ամէն ոք կրնայ հաւկնալ, որ թերթ մը իր բաժնեգիններով կը շարունակուի. և կը սիրենք յուսալ որ ամէն մի բաժանորդ և գործակալ կը զգայ որ դրամի ամենափոքր յապաղումը մեծ դժուարութիւններու կը մատնէ խմբագրութիւնը։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Հայկական սարսափների ժամանակ ամբողջ աշխարհի մամուլը իրար անցաւ. և զարմանալի կը լիներ եթէ չանցնէր, որովհետեւ մարդկութիւնը տաճկական գազանութիւնների պէս պատմական ոճրագործութիւններու վկայ գրեթէ չէր եղել։

Եւրոպական մեծ ու փոքր ժողովրդների լրագիրները, նոյնիսկ Ռուսական մամուլը՝ որի կառավարութիւնը տնպայման հակառակ է հայկական շարժումներին, ձայն բարձրացրին յօգուտ մեր ժողովրդին և օգնութեան հրաւէր կարդացին. իսկ ֆրանսական լրագիրները, շատ քիչ բացառութեամբ՝ ոչ միայն լռեցին, այլ և յաճախ թուրքերին պաշտպան հանդիսացան։ Կարծիք յայտնվեց, նոյնիսկ համոզում գոյացաւ որ ֆրանսական շատ լրագիրներ տաճկական դեղին ոսկիներով հրապուրված՝ Սուլթանին էին վաճառել իրենց գրիչը և խիղճը...

Ֆրանսական լրագիրների բբռնած այդ ամօթալի և անխիղճ ընթացքը դէպի հրի և սրի բաժին դարձած հայ ժողովուրդը՝ շատ վատ տպաւորութիւն գործեց ամբողջ լուսաւոր աշխարհի ազնիւ մասի վրայ. իսկ մեզ՝ հայերիս համոզեց թէ տկարներին և սարսկներին միշտ օգնութեան հասնող ֆրանսական ազգը բոլորովին կորցրել է իրեն յատուկ ասպետական յատկանիշները՝ ընկղմվել անբարոյական ցեխի մէջ...

Շատ քիչերը կային որ ֆրանսայի բարոյական անկումը ժամանակաւոր, զանազան բարդ հանգամանքների արդիւնք համարելով, սպասում էին թէ ֆրանսիան նորից իրեն արժանի բարձրութեան վրայ կը բարձրանայ։

* * *

Բարեբաղդաբար այդ յոյսերը այնքան էլ սին չեն եղել. այսօր մեծ փոփոխութիւն է նկատվում ֆրանսական մամուլի մէջ. այս տարուայ ընթացքում ֆրանսական մի քանի նշանաւոր թերթեր, քաղաքական հայեացքներով իրարից տարբեր, երկար ու բարակ զբաղվեցին հայերիս վիճակով։ «Թան»ը, ֆրանսական ամենատարածուն լրագիրներից մէկը, մի քանի լուրջ առաջնորդող յօդուածներ նուիրեց հայ ժողովուրդին։ Կարճ ասելով՝ ֆրանսական մամուլը զբաղվեց և հետաքրքրեաց աւելի մեծ եռանդով զբաղվում է մեր վիճակով և մեզ օգնելու հրաւիրում թէ ֆրանսական ժողովրդին և թէ կառավարութեանը։

Մխիթարական և քաջալերական է ֆրանսական մամուլի այս նոր ընթացքը։

Մենք փոքրիկ ժողովուրդ ենք, իսկ մեր թշնամին զօրեղ և կատաղի. Ֆրանսան այն մեծ ազգերից է, որոնց կառավարութիւնները աշխարհին և մեզ խոստացել են մեզ պաշտպան հանդիսանալ թրքական գազանութիւնների դէմ։

Այդ բոլոր ազգերի համակրութիւնը հայերիս համար մեծ նշանակութիւն ունի. չանանք զօրացնել այդ համակրութիւնը, ոչ մուրալով և ոչ նրանց դուռը չարժելով։

Չանանք մեր քաղաքացիական բարեմասնութիւններով, արի ազատասիրութեամբ, մեզ յարգել տալ, սիրել տալ ֆրանսիային և բոլոր եւրոպացիներին։

Չանանք զգացնել տալ որ մենք ազատութեան արժանի ժողովուրդ ենք, և իբր այդպիսի, արժանի մեզնից զօրեղների աջակցութեանը։

ՎԱՐԴՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 8 Հոկտ.

Ասկէ երեք օր առաջ Օրմանեան, իր ճարպոտ փորը շալակն առած՝ պալատ գնաց «ուխտի»...

«Ուխտագնացութիւն» մըն էր այդ և ոչ հասարակ այցելութիւն մը. Օրմանեան գնաց յայտնելու «հայոց ազգին անծայր շնորհակալիք, երախտագիտութեան անհուն զգացումները» իր աստուածավայել վեհապետին՝ չի լսուած առատաձեռնութեան ու բարեգթութեան համար։

Կը հասկնաս. ընթերցող, խընդիրը լոյս տեսած իրատէին, մեր անցեալ թղթակցութեան մէջ յիշած արքահատելի թուղթի կտորի մասին է։ Օրմանեան գնաց պալատը, որ շնորհակալութիւն յայտնէ այդ իրատէին շնորհած ողորմածութիւններու առթիւ։

Այլեւս Արթին և Օրմանեան իրենց յաղթութեան գագաթնակէտին վրայ են. փրկեցին հայոց ազգը, թեթեւցուցին անոր տառապանքները... մէկ խօսքով Իսրայէլի ժողովուրդը հասցուցին Աւետեաց երկիրը...

Աղտո՞տ, տո՞ր մարդեր։ Ես համոզուած եմ որ իրենք ալ լաւ մը ըմբռնած են թէ թուղթի կտորիկով մը հայու անվերջ տառապանքներուն թեթեւութիւն ՉԸԼԼԱՒ. բայց կը կեղծեն, կուզեն ժողովուրդը խաբել, անոր աչքը փոշի փչել։

* * *

Հերիք է Օրման-Արթիններով զբաղիլ. ճշմարիտ ձանձրացայ։ Փիլ մըն ալ տարբեր խնդիրներու մասին գրեմ։

Գիտե՞ արդեօք «Շարժումի» ընթերցողը, որ տաճիկ մը «օսմանեան անծուխ վառօդ» է հնարեր. այդ տաճկի անունն է Իզէտ փաշա (նոր Գօլիմպոս մը, կամ նոր Էտիսըն մը՝ մի տաճիկ) ու կառավարութիւնը իր ցեղէն ծնած հանճարը չի խեղդելու համար, մեծաքանակ ծախքերով «օսմանեան անծուխ վառօդի գործարան»մըն է հիմներ հոս, գեղանկար Նեղուցի ափերուն վրայ։

Երկու տարիէ աւելի այդ գործարանը կը գործէր. անդադրում, անխոնջ կը գործէր։ Գէշ լուրեր սկսան պտտիլ անոր մասին և այդ լուրերու ազդեցութեան տակ քննիչ յանձնաժողով մը կազմուեցաւ գործարանին ըրածը, ելքը, մուտքը և այլն աչքէ անցնելու, քննելու համար։ Քննուեցան նախ ելեւմտից գրքերը։ Հոն ընդհանուր արտադրութիւն գրուած էր 30,000 քիլոկրամ «օսմանեան անծուխ վառօդ»։

Ես բաձարձակ ոգէտ մըն եմ վառօդ շինելու գործին մէջ, ան ալ «օսմանեան» անծուխ վառօդ... միայն սաչափը կըմբռնեմ, որ քանի մը տասնեակ հազարներով լիրաներ ծախսող գործարանէ եթէ ոչ 30,000 քիլօէն աւելի, գէթ այդչափ կարելի էր պահանջել՝ աչքի առաջ ունենալով նաև տաճկական «ուտելը», ամէն գործի մէջ «գողութիւնը, կաշառքը» և այլն։

Բայց ո՞վ սարսափ, ո՞վ Արամազդ, գժոխք, երկինք... միմիայն, լաւ լսեցէք... միմիայն 200 քիլոկրամ վառօդ կայ եղեր իսկ մնացեալ 29,800 քիլօն ո՞ւր է, այդ ոչ ոք կրցաւ իմանալ։

Խիստ սուղ է եղեր «օսմանեան անծուխ վառօդը»... եթէ հաշուենք այդ չնաչխարհիկ գործարանին վրայ ծախսուած բոլոր գումարը 40—50,000 ոսկի, մէկ քիլօին արժէքը կընէ ոչ պակաս 200—250։ Եւ եթէ ենթադրենք որ Իզէտ փաշային պէս տարեկան չորս հինգ հանճարներ կրնայ ծնիլ Թուրք ժողովուրդը կամ թրքական հարէմը, այն ատեն պարզ կըլլայ մեզի համար, որ մէկ ու կէս տարիէն ամբողջ երկրին ֆինանսները կրնան հասնիլ Ղաղարոսի աղքատութեան վիճակին, ուր և են այսօր։

Իզէտը հեռացուեցաւ իր պաշտօնէն և այժմ Նայիբ փաշայի առաջնորդութեամբ յանձնախումբն է կազմուեր, որ պիտի երթայ այցելելու զանազան եւրոպական համանման գործարաններ, անծուխ վառօդի գործը ուսումնասիրելու և գալու հոս մեր դժբախտ գործարանին մէջ հարկաւոր վերանորոգումները մրցընելու։ Միայն կը վախնամ որ այդ «վերանորոգումները» հայոց «ըէֆորմներու» օրը իյնան...

Մէկ գիտողութիւն մրն ալ. եթէ Նայիբ և իր ընկերները միայն «նայելով, տեսնելով» պիտի սորվին այդ գործը... ժողովրդական առածը միայն կը յիշենք. «եթէ լոկ նայելով բան մը սորվիլ կարելի ըլլար, Պոլսոյ ամէն շուներն ալ մսագործ պիտի դարձած ըլլային». որովհետեւ 10—15 տարիներ մսագործներու դռներէն ներս կը նային անվերջ։

* * *

Աղարեանի յաջորդ Մանուէլեան եպիսկոպոսի ընտրութիւնը գիտէք արդէն երկու ու կէս ամիս է կատարուեր է։ Պալատը մինչեւ օրս անոր հաստատութեան իրատէն չէր ուզեր հանել, որովհետեւ Մանուէլեան (թէեւ փտած գլուխ ասուածաբան մը) անչափ ալ տաճկին ուզածը չէր։ Բայց տես որ ասանկ խնդիրներու մէջ հայ-կաթոլիկներու պետերն աւելի վճռական ու անկախ են, քան մեր սարուկ-Օրմանեաններն ու Աշրգեանները..... թէեւ Սուլթանը կը յապաղէր Մանուէլեանի ընտրութիւնը հաստատող իրատէն լոյս ընծայել, բայց Մանուէլեան, Հռովմի հրահանգով՝ ինքզինքը հրատարակեց Պատրիարք Պոլսոյ և Կաթոլիկոս Տանն Կիլիկիոյ հակառակ զգուշութեան և սուտ քաղաքագիտութեան աղուէսական նկատումներու։

Սուլթանի կառավարութիւնը՝ ասանկով մեկուսացուցուած էր և արհամարուած... բայց ճարն ինչ. այսօր սոիպուած եղաւ գլուխը խոնարհել կաթոլիկ «կեսվուրներու» խմբակին առաջ ու հոկտ. 2ին լոյս ընծայեց իր կայսերական իրատէն, թէեւ Մանուէլեան երկու ամիսէն արդէն աւելի է կը վարէր գործերը իբր էապէս պաշտօնական անձ մը։

Օրմանեանի աչքերը կուրցեր են. ասանկ փաստերը չի տեսներ։

* * *

Տարբեր լուր մըն ալ։

Հոս է ֆրանսայի աշխարհահռչակ ողբերգու Մանէ Սիլլին։ Եկած է 4—5 ներկայացումներ տալու համար։ Խաղաց արդէն Ռիւի-Պլաշ, Օթէլլո, Էսթիր և այլն։ Ամէն անգամ սրահը լեցուն է. ամէնն ալ եւրոպացիներ։ Տեղացիներէն և ոչ ոք կար։

Ի՞նչպէս կրնան Թուրքերը առանկ ներկայացումներ ու ասանկ դերասաններ հասկնալ։

Տարիներ առաջ հոս էր և աշխարահռչակ երգչուհի Ատելին-Բատտին։ Վեհապետին հետաքրքրուեցաւ զանի տեսնել և լսել անոր երգը։ Մեծկակ գումարով մը պալատ հրաւիրուեցաւ երգելու։ Երգելէն վերջը՝ Սուլթան ցանկութիւն կը յայտնէ որ Բատտին քիչ մըն ալ «պարէ»։

Երբ Բատտի վիրաւորուած կը յայտնէ, որ ինքը պարել չի գիտեր, Սուլթանը կը զարմանայ...

Երբ վեհապետն ասէ, ի՞նչ է ուրեմն ժողովուրդը... ան ալ դուք հասկցէք։

Թղթակցութիւնս երկար եղաւ. դիտողութիւն մըն ալ և վերջ։

Սիլլիին արգիլեցին Համլէթ խաղալ...։ Երեւի անոր համար որ հոն բեմը պատկերներ կան Համլետին յիշեցնող եղբայրասպանութեան գործը—գահը խլելու համար և, որ աւելի զարհուրելի է Համլետին համար՝ եղբօր որդին հօր վրէժը կը լուծէ, սատկեցնելով իր հօրեղբայրը։ Կը հասկնաք անշուշտ, որ Սուլթանի հիւանդ ուղեղին ու ջիղերուն համար Համլէթ անունը լսելն անգամ սպանիչ է, ո՞ւր մնաց զայն ներկայացնելը իր քթին տակ, Պոլսոյ մէջ։

Արգիլեցին և Սիա տրամը. որովհետեւ հոն ալ սպանիական մաւրները կը յաղթուին քրիստոնեաներէն։

ԲԱԺ

ՈՒԷՍԹ-ՀՕՊՕՓԸՆ, 25 Սեպտ.

Երէկ տեղի ունեցաւ տեղւոյս Ազատ լսարանը Սաֆոյ և սիրինկ սորիտ փողոցի ժողովարանին մէջ՝ նախագահութեամբ Տ. Մ. Բ. Շիշմանեանի։ Ժողովը բացուեցաւ ճիշտ ժամը երկուքը քառորդ անցած և կարդացուեցաւ նախորդ ժողովի արձանագրութիւնը։

Օրուայ ճառախօսողներն էին. Տ. Սուրէն Սուրէնեան և Միհրան Լալօեան. նախ Պ. Մ. Լալօեան կարդաց «Օսման փաշայի գիւտը» որուն վերջաբանութիւնը հանգաւ «եա իլահ ինիլլահ» խօսքերով. կարծես թէ հայ ժողովուրդը մահմէտականութեան կը հրաւիրէր։ Միայնալ նահանգաց Ազատ աշխարհի մէջ, հազիւ թաղ նոր ազատեր էին այդ առասպելական պիղծ ձայներէն։ Կերեւի թէ աւելի բարձր ազգերու գիւտք լմնցած էին։

Յետոյ ա. Սուրէն Սուրէնեան, ելնելով բեմը իր պատրաստած երկար ու բարակ ճառը կարդալ. նիւթ ունենալով «շարժում» և ի մէջ այլոց ըսաւ թէ (ամէն ատենք որ յեղափոխութիւնը կը դառապարտեն, իրենք էին յեղափոխութեան գործը առաջ բերող. ցաւալին այն է որ, կարմիր յեղափոխականներէն մին ինքն էր և կը քարոզէր լռութիւն, լռութիւն։ Լռենք, ի՞նչ ընենք։

Ժողովը փակուեցաւ ճիշտ ժամը չորսին քառորդ մնացած, թէ Հայրենեաց երգով։

Ժողովը փակուելէն վերջ, ձեռք առնուեցաւ տեղական եկեղեցւոյ և դպրոցի կառուցման առկախ խնդիրը Մ. Շիշմանեանի առենապետութեամբ. դպրոցի յանձնախումբէն մի անդամ ուսուցած էր իր հրաժարականը Ազատ լսարանի վարչութիւն՝ որ ներկայացնէ ժողովրդին. կարդացուելէն վերջ Պ. Ս. Ալիքանարեան ըսաւ թէ ի՞նչ նշանակութիւն ունի հրաժարականը. արդէն վեց ամիսէ առաջ լրացած է իրենց պաշտօնավարութիւնը, և ժողովուրդը կը ըսէ՝ քիչ մը դեմ. միթէ իր հրաներէն եւ վարձկան մամուլէն խաբուած էին։ Մեր երկրին մէջ՝ նախարար Հանոթօն երկար ամիսներ անամոթաբար սուեց, իր թղթապանակին մէջ ունենալով ջարդը գուշակող հեռագիրները, որոնցմէ վերջ յօդուածները կը պատմագրէին իրողութիւնը՝ եւ կը թուէին այրած քաղաքներն ու գիւղերը եւ հարիւրաւոր քրիստոնէից չարաչար սպանումները. նախարարը խորհրդարանին մէջ անդադար կը հաստատէր թէ Պոլիս եւ Փոքր-Ասիա «անդորրութիւնը կատարեալ է»։

Հանոթօն ֆրանսական դեսպանին ու հիւպատոսներուն նամակներն ու հեռագրերը կարդալէ եւ թագուցանելէ զկնի, Սուլթան Ապտիւլ-Համիտի մասին գերներբողական յօդուածներ կը ղրկէր հանդէսներուն։ Օրսէյի քարափը պիղծ մամլոյ բոլոր Ալիոնսոս Ումպէրթոներուն հետ կը տեսակցէր՝ լռութեան քողով շրջապատելու համար հրէշային ոճիրը. Էֆրեռ, իր առաջին ատենաբանութեանց փոխան՝ պատուոյ լեգէոնի խաչեր կատանար. Տէպա լրագրոյ անօրէնները քարափներու եւ փարոսներու արտօնութիւններ կընդունէին. ուրիշներ հնչուն դրամ կը գրպանէին. Մարդասպանին ահագին հարստութիւնը լայնարձակ օրէն ամէն բան ընել կը թոյլատրէր անոր։ Եւ արդ՝ երբ իր գործակալները Ֆրանսա կուգան քանի մը երիտասարդ թուրքերու մատնութիւնը ծախու տանելու, կողջունուին դարձեալ ի գիտնուստ կոտորածի համար մեր մեծանձն սքանչացողներէն եւ Թրքական ոսկիներու սիրահար գրչասեաներէն։ Երեք հարիւր հազար մարդկային արարածներ զարհուրելի խոշտանգանօք ջնջուելով՝ Հանոթօն փաշայութիւն ժառանգեց եւ ստացաւ կայսերական «իմթիյազ»ի ու Արեան չքանշանի պատուակալ աստիճանը, այլովքն հանդերձ...։

Միթէ կարելի՞ է որ Պ. Տէլդասէ ստախօս, ուխտադրուժ եւ նենգամիտ Հանոթօյի ճամբուն հետեւի։ Սակայն, Հանոթօյի օրով Կ. Պոլիս Ֆրանսան կը ներկայացնէր պարկեշտ մարդ մը, Պ. Գամպոն։ Պ. Գոնսթանի անունն ու բնաւորութիւնը այսօր աւելի ապահովութիւն կը ներշնչեն Սուլթանին քան իր զոհերուն։ Ներկայ կառավարութիւնը խաբուելու չէր իր դեսպանէն՝ ինչպէս ազգը ասկէ քիչ առաջ խաբուեցաւ իր կառավարութենէն։

Մեծ կոտորածէն ի վեր, մարդասպանութիւնները երբէք դադրած չեն բոլորովին։ Որքան գաւառներուն մէջ նոյնքան Կ. Պոլիս, հազարաւոր թշուառներ դիապատ կը գլորին տակաւին բթասրերու եւ դանակներու ներքեւ։ Դահիճները՝ հայերը բնաջիջինջ ընելու նոր միջոցներ գտան, կազմակերպելով սովը, եւ վարելով անսուաղ եղկելիները ճամբաներու տարապարհակ աչխատութեանց, ընդհուպ հոն ծածկելու համար անոնց դիակները։ Դահանգի մը մէջ, առանց զգեստի եւ հացի քառասուն հազար որբեր կը հաչուուին, որք ցուրտ ու դժբաղդութիւն կը շնչեն պալատի կանանոցներու համար ծախուելու ամենէն քսանեալի բաղդն իսկ չունենալով, ըստ որում մարդկային մսի վաճառանոցը արդէն խճողուած էր։

Կաթոլիկ միաբանութիւնները անարգ արծաթքաղութեամբ մեծցուցին սարսափները։ Վանականներն ու կրօնուհիները՝ որ հոս Սղոմական վանքերուն մէջ կը սեսնենք, մտածեցին հայերը հաւատուրացութեան եւ մահուան մէջտեղ կեցնել. քոյրի ներքեւ ծաւալելու մոլութիւնները, չահագործելու ծերերուն թշուառութիւնը, չարչրկելու որբերն ու խելագարները՝ աշխատութեան հնարաւոր եղած առաւելագոյն պտուղը քաղելու համար։ Հռոմէական եկեղեցւոյ դիրկը իյնող ուրացեալները՝ միաբաններէն եւ կուսաններէն վանքին մէջ ապաստանարան մը եւ աղայոյ համար ալ պատատ մը հաց ստացան կոտորածի պահուն։ Ապա թէ ոչ քուրտերու եւ համիտիյէներու դանակը, չարչարանքը, ծայրատութիւնը. վամ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՒ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Նիքոլա Բ. կայսրը իր մարդասիրական յայտարարութիւնը հրապարակած պահուն՝ Ֆինլանտիոյ փոքրիկ ժողովրդին իրաւանց եւ ազատութեանց հակառակ ամէնէն անարգ ձեռնարկը ի գլուխ կը հանէր։ Լահէի վեհաժողովին յաջորդ օրը, Անգլիա զօրք կը ղրկէ Բոէրացիներուն դէմ, հարաւային Ափրիկէ, առանց դիմելու նախ իրաւարար ատենին։ Եւ ահա՝ կոտորածներն ալ ինորոյ կըսկսին Հայաստան. կը լսենք արդէն թէ արիւնը հոսիլ սկսած է Սեբաստիոյ, Մուշի եւ Վանայ. նահանգներուն մէջ։

Եւրոպան, Կարմիր-Սուլթանի շահատականութեանց հանդէպ, անգամ մը եւս աչքերը դարձուցած եւ ականջները խցած պիտի կենա՞յ, չը լսելու համար համօրէն ժողովրդի մը ոգեւար հնհնուքի ճիչը։

1894ի ջարդերէն յետոյ քաղաքակրթեալ ազգերը ներողութիւն հայցեցին. որովհետեւ իրենց կառավարութիւններէն, ճիւաղին մեղսակիցներէն եւ վարձկան մամուլէն խաբուած էին։ Մեր երկրին մէջ՝ նախարար Հանոթօն երկար ամիսներ անամոթաբար սուեց, իր թղթապանակին մէջ ունենալով ջարդը գուշակող հեռագիրները, որոնցմէ վերջ յօդուածները կը պատմագրէին իրողութիւնը՝ եւ կը թուէին այրած քաղաքներն ու գիւղերը եւ հարիւրաւոր քրիստոնէից չարաչար սպանումները. նախարարը խորհրդարանին մէջ անդադար կը հաստատէր թէ Պոլիս եւ Փոքր-Ասիա «անդորրութիւնը կատարեալ է»։

Հանոթօն ֆրանսական դեսպանին ու հիւպատոսներուն նամակներն ու հեռագրերը կարդալէ եւ թագուցանելէ զկնի, Սուլթան Ապտիւլ-Համիտի մասին գերներբողական յօդուածներ կը ղրկէր հանդէսներուն։ Օրսէյի քարափը պիղծ մամլոյ բոլոր Ալիոնսոս Ումպէրթոներուն հետ կը տեսակցէր՝ լռութեան քողով շրջապատելու համար հրէշային ոճիրը. Էֆրեռ, իր առաջին ատենաբանութեանց փոխան՝ պատուոյ լեգէոնի խաչեր կատանար. Տէպա լրագրոյ անօրէնները քարափներու եւ փարոսներու արտօնութիւններ կընդունէին. ուրիշներ հնչուն դրամ կը գրպանէին. Մարդասպանին ահագին հարստութիւնը լայնարձակ օրէն ամէն բան ընել կը թոյլատրէր անոր։ Եւ արդ՝ երբ իր գործակալները Ֆրանսա կուգան քանի մը երիտասարդ թուրքերու մատնութիւնը ծախու տանելու, կողջունուին դարձեալ ի գիտնուստ կոտորածի համար մեր մեծանձն սքանչացողներէն եւ Թրքական ոսկիներու սիրահար գրչասեաներէն։ Երեք հարիւր հազար մարդկային արարածներ զարհուրելի խոշտանգանօք ջնջուելով՝ Հանոթօն փաշայութիւն ժառանգեց եւ ստացաւ կայսերական «իմթիյազ»ի ու Արեան չքանշանի պատուակալ աստիճանը, այլովքն հանդերձ...։

Միթէ կարելի՞ է որ Պ. Տէլդասէ ստախօս, ուխտադրուժ եւ նենգամիտ Հանոթօյի ճամբուն հետեւի։ Սակայն, Հանոթօյի օրով Կ. Պոլիս Ֆրանսան կը ներկայացնէր պարկեշտ մարդ մը, Պ. Գամպոն։ Պ. Գոնսթանի անունն ու բնաւորութիւնը այսօր աւելի ապահովութիւն կը ներշնչեն Սուլթանին քան իր զոհերուն։ Ներկայ կառավարութիւնը խաբուելու չէր իր դեսպանէն՝ ինչպէս ազգը ասկէ քիչ առաջ խաբուեցաւ իր կառավարութենէն։

Մեծ կոտորածէն ի վեր, մարդասպանութիւնները երբէք դադրած չեն բոլորովին։ Որքան գաւառներուն մէջ նոյնքան Կ. Պոլիս, հազարաւոր թշուառներ դիապատ կը գլորին տակաւին բթասրերու եւ դանակներու ներքեւ։ Դահիճները՝ հայերը բնաջիջինջ ընելու նոր միջոցներ գտան, կազմակերպելով սովը, եւ վարելով անսուաղ եղկելիները ճամբաներու տարապարհակ աչխատութեանց, ընդհուպ հոն ծածկելու համար անոնց դիակները։ Դահանգի մը մէջ, առանց զգեստի եւ հացի քառասուն հազար որբեր կը հաչուուին, որք ցուրտ ու դժբաղդութիւն կը շնչեն պալատի կանանոցներու համար ծախուելու ամենէն քսանեալի բաղդն իսկ չունենալով, ըստ որում մարդկային մսի վաճառանոցը արդէն խճողուած էր։

Կաթոլիկ միաբանութիւնները անարգ արծաթքաղութեամբ մեծցուցին սարսափները։ Վանականներն ու կրօնուհիները՝ որ հոս Սղոմական վանքերուն մէջ կը սեսնենք, մտածեցին հայերը հաւատուրացութեան եւ մահուան մէջտեղ կեցնել. քոյրի ներքեւ ծաւալելու մոլութիւնները, չահագործելու ծերերուն թշուառութիւնը, չարչրկելու որբերն ու խելագարները՝ աշխատութեան հնարաւոր եղած առաւելագոյն պտուղը քաղելու համար։ Հռոմէական եկեղեցւոյ դիրկը իյնող ուրացեալները՝ միաբաններէն եւ կուսաններէն վանքին մէջ ապաստանարան մը եւ աղայոյ համար ալ պատատ մը հաց ստացան կոտորածի պահուն։ Ապա թէ ոչ քուրտերու եւ համիտիյէներու դանակը, չարչարանքը, ծայրատութիւնը. վամ

ժարականը տալով, կրնա՞յ արդարացնել ինքզինք...։

Պ. Կ. Ջանքաշեան առաջարկեց որ նոր ընարութիւն ըլլայ, և վերակազմուի յանձնախումբ մը, թէ դպրոցի և թէ եկեղեցւոյ խնդիրները առաջ տանելու համար։

Իսկ Տ. առենապետը «լարուած թակարթով», մէկ առ մէկ պարզեց իր դաղափարը՝ ըսելով թէ, այս խնդիրը սեղանի վրայ թողնայ, մինչեւ որ նոր տարուան նոր մարդ գտնենք և կարդադրենք։ Երիտասարդները ժամ առաջ կուզեն դպրոցը վերականգնել. անոնցմէ մին, Մկրտիչ Զուլհակեան ըսաւ թէ, ինչո՞ւ կը յետաձգուի նոր տարուայ այս կարեւոր խնդիրը. մրեւնոյն է, նոյն անձերէն պիտի որոշուի յանձնախումբը, չէ՞ թէ, նոր նոր մարդ պիտի բուսցնէք։ Այս խօսքերէ վերջ. Տ. առենապետը առամները կրճկտելով ըսաւ, ո՞չ մենք կրնանք այս խնդիրը առաջ տանիլ և ոչ ալդը։ Ապա՛ պէտք է որ սրբազան Սարաճեանը յառաջ տանի, Մ. Ջալհակեան մերժեց անոր անիմաստ խօսքը և ըսաւ թէ, սրբազան Սարաճեանը, ամիսներ առաջ մերժեր է այսպիսի խնդրի մը ձեռնարկել, նոյնիսկ հավու մը բոյնի չափ անգամ կարեւորութիւն չընծայեց. առարկելով թէ հիմակ մեր վրայ ալ աւելի ծանր բեռներ դրուած կայ Վեհ. Հայրապետի կողմանէ. որքանոցի խնդիրը. մինչդեռ Փրովիտէնսի մէջ որբոց խնդրոյ համար, կը հակառակէր՝ ըսելով «թէ մենք որբերը չենք կարող հոգալ։ հիմակ եկեղեցին հոգալու ժամանակն է, վերջը ձեռքերնուս կերթայ»։

Հայկ Գնունի

ՉՔԱՒՈՐՆԵՐԸ

Զմեռը վրայ հասաւ. ունեւորը կոկսի ամէն կարգի պիտոյքները հոգալ երկարատեւ ձմրան համար. բայց ո՞վ կը մտածէ թէ երբ ունեւորը իր տաքուկ սենեակին մէջ նստած վառարանին դիմաց քէֆ կընէ, անդին կը գտնուին նաեւ այնպիսի ընտանիքներ, որոնք զուրկ ամէնէն՝ խարխուլ խրճիթի մը կամ սենեակի մը անկիւնը քաշուած, իր չորս կողմը առած փոքրիկները զանոնք մխիթարելու կը ջանայ, չի նայելով անոնց հաց տուր մայրիկ աղաղակներուն. և ձեռքերնին իր ձեռքին մէջ առած կը յորդորէ որ իրենց հայրը կուգայ ու կը բերէ օրական հացը։

Ցաւալին այն է որ տեղս շատ կը գտնուին այսպիսի անօգնական մնացած չքաւորներ, որք երբեմն կը դիմեն եկեղեցի. ու հոն ալ չի գտնելով իրենց ուղածին գոհացում տուող պաշտօնական մարմին մը՝ սոխպուած են գլուխնին կախած ետ դառնալ, կամ տուներու և սրճարաններու դռները մուրալ։

* *

Այս վիճակը փոքր ի շատէ դարմանելու համար շատ տեղեր կը կազմեն ազգասանամ ընկերութիւններ որք օգնութեան՝ կը հասնին չքաւորին, և շատ անգամ եւս ցրտի անգութ ճիրաններէն ու մահէն կազատեն ոչ սակաւ խեղճեր։ Փողովուրդը այսպիսի ընկերութիւնները կը քաջալերէ, որովհետեւ կը զգայ թէ իր տուած դրամը ունայնօրէն չի ծախսուիր, այլ կը նպաստէ անոք ընտանիքներու։

Շուրջ երկու տարի առաջ հոս եւս գոյութիւն ունէր այդպիսի ընկերութիւն մը, որ որոշ չափով կը գոհացնէր իրեն դիմող չքաւորներուն. բայց վերջ ի վերջոյ տոր պաշտօնական մարմնոյն մէջ ուր եռալ անդամ ընտրուած էի, եղան այնպիսի անխիղճ անձնաւորութիւններ, որք առիթէն օգտուելով՝ մուտ գործեցին ժողովրդի ամենախեղճուկ յարկերու տակ, ու պղծեցին ամէն ինչ որ նուիրական էր. ի հարկէ նաեւ գտնուեցան անոնց մէջ մինչեւ վերջը անկեղծօրէն աշխատողներ. սա անուրանալի է։ Հասարակութիւնը տեսնելով այս փողոչային արարքները ետ քաշուեցաւ, ու ընկերութիւնը կործանեցաւ, տանելով իր հետ նաեւ բազմաթիւ չքաւորներու յոյսերը։

* *

Ուրեմն ժամանակը կը տեսնենք հրաւիրելու հասարակութեան ազնիւ մասը, որ ձեռնարկէ հիմնելու համար չքաւորին օրական պէտքերուն գոհացում տուող ընկերութիւն մը, վստահ ըլլալով որ ժողովուրդը չպիտի զլանայ իր նուէրը տալ այսպիսի մի սուրբ նպատակի իրագործման համար։

ՄՈՒՐԱՏ–ՍՈԿՐԱՏ

——)·(——

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շատ երկար ժամանակ է, որ ուզում էի «Շարժում»ի մի նամակ գրել Թաւրիզից գրուած «Միրզա» ծածկանուան տակ թղթակցութիւնների առթիւ, բայց առանց քաշուելու չպիտի ծածկեմ, որ կասկածում էի թէ թերթը կուսակցական է և տեղ չպիտի տաք իմ երկտողիս, ուստի այսպէս անորոշ կացութեան մէջ սպասում էի յարմար առթի և միանգամայն լիայոյս էի, որ այդպիսի մի առիթ անպատճառ կը ներկայանայ. տպագրելով թերթդ ապատ Բուլղարիայի մէջ։

Վերջապէս ես հասայ նպատակիս, յոյսերս պարապ չանցան. սեպտ. 16ին Թաւրիզում ստացվեց ձեր թերթի 157 և 158 համարները, ուր կարդացի ինչու «Գալաթիագոլի մեղադրելո՞ պարզ և ազդու առաջնորդողը, որով Պ. Վարդօն մեղադրում է ծածկանուան տակ գրող թղթակիցներին, որոնք շատ անգամ թոյլ են տալիս սրա նրա հասցէին զանազան ոչ մարդավայել խօսքեր շպրտելով արատաւորել մէկին միւսին։ Ձեր թերթի Թաւրիզի թղթակից «Միրզան» անցեալ տարուանից սկսել է իմ պատւի հետ խաղալ՝ ուսացնելով միանգամայն իմ անունս, զանազան վիրաւորական մակդիրներ տալով ինձ...

Պ. Խմբագիր, մտածում եմ թէ ինչպէս դուրս գամ ձեր թղթակցի դէմ. և միթէ տյոքան մակդիրների արժան մարդը իրաւունք ունի երեւան գալ որեւիցէ թերթի մէջ. մի՞թէ ա-

---

կանանոցը պատրաստ էր։

Ահա նոր ջարդեր կը սարքուին։

Ի՞նչ պիտի ընէ հիմա Ֆրանսան՝ որ չունի այլեւս յարմարագոյն չքմեղանք մը։ Աւա՛ղ, Ֆրանսան ուր կը փթթի մոլեռանդութիւնը, ուր միլիոնաւոր մարդկերներ մահ կը գոռան անմեղ հրեայներուն եւ անոնց պաշտպաններու դէմ, ուր գաղթային փողոտիչք հրացողներ եւ ջատագովներ կը գտնեն, դեռ արդարացուցիչ ցոյց տալու կարո՞ղ է։ Ի՞նչ կընեն Կարմիր–Սուլթանին քուրդերն ու համիտիյէները, երբ արեամբ ու ծխաչունչ աւերումով կը ծածկեն լայնատարած երկիր մը, որ կատր կատր կընեն մանուկներն իրենց հարց ծունկերուն վրայ, եւ գլուխներ, ձեռքեր ու ոտքեր կը կարեն, որ կիները պղծելէ վերջ փորերնին կը ճեղքեն ու ողջ ողջ կայրեն, եւ կը ծայրատեն փոքրիկ աղաքներն ու հարիմներուն կը ծախեն գեղատես աղջիկները. չէ՞ որ ճիշդ եռապոյն դրօշին ներքեւ Դաղիական սպաներուն ըրածը Ափրիկէ. եւ ինչ որ կը կատարեն մեր Վալիներն ու կանոնիկոսները Ֆրանսական մամլոյ երեք չորրորդէն տրդրացած. ինչ որ կը գործադրեն մեր վաճառականները ժողովուրդին ինը տասներորդ մասէն ծափահարուած։ Մենք մարդասպաններս օսմանցի Հողխոզիկները մեղադրելու բան մը չունինք. եւ թէ քիւրտերու դաշոյնին փոխան մեր Մէրսիէ տեղեկալներուն վեց հարուածներն ըլլային, հայերը մեծ շահ մը ձեռք բերած պիտի չըլլային։

Այժմ եւրոպայի կը մնայ բոլորովին ճանչնալ իր պարտականութիւնը եւ վերջապէս կատարել զայն, ըստ որում ընդհանուր եւրոպան յանցապարտ է հայերուն դժբաղդութեանց, հակառակ խաղաղական ժողովներու եւ մարդասիրական յայտարարութիւններու. բոլոր կատակերգութեան, անշուշտ ոճրի մը պատասխանատուութիւնը կատանձնէ Եւրոպա։

Սուլթան Ապտ–Իւլ–Համիտը սոսկալի մարդասպան մըն է. զինքը կը ճանչնանք, Փոքր–Ասիոյ մէջ պատահածները իր յայտնորոշ հրամանին եւ բացայայտ հրանանքներուն համաձայն տեղի ունեցան. այս մասին համաձայն ենք։ Սակայն, առանց ո եւ է վճռոյ յանգելու, միշտ զայն յեղյեղելն բանի մը չծառայեր։ Մենք ապահով ըլլալով՝ չիկազոյն գազանին նկատմամբ տեղացած լուսանքնիս աւելի կը դրդուեն զայն հանդէպ ճիրաններուն ներքեւ առած զոհերուն։ Միակ պարագայ մը՝ որ կրնայ փրկել հայերուն մնացորդ մասը,—պետութեանց անմիջական համաձայնութիւնն ու միջամտութիւնն է։

1878 մարտ 3ին, Սան–Ստէֆանոյի դաշնագրով, Ռուսիա 16րդ յօդուած մը ներմուծեց՝ որով Փոքր–Ասիոյ մէջ կարեւոր բարենորոգումներու ընդհանուր գործադրման կը հարկադրէր Թուրքիան, եւ որ հայերու ապահովութիւնը կերաշխաւորէր ընդդէմ քրտերու եւ Կովկասաբնակ չարագործներու։ Աղէքսանտր Բ. կայսրը այս կերպով կը փոխարինէր պատերազմի ատեն հայ զօրապետներու մատուցած ծառայութիւնները. եւ մարդասիրական զգացման մը անսալով՝ կը հպատակէր միեւնոյն ատեն քաղաքական դաղափարի մը։ Հայաստան այս կերպով կը դառնուէր Ռուսիոյ՝ թերեւս չահախնդիր, սակայն ազգու եւ ապահով պաշտպանութեան ներքեւ։ Պետութիւնները միջամտելով, պատեցին Սան–Ստէֆանոյի պայմանագիրը եւ փոխարէն Պերլինի ընդհանուր դաշնագիրը յօրինեցին։ Այս անդամ, անպայման, անժամանակ եւ անեղբաչխաւոր 61րդ տարատամ յօդուածով մը Հայաստանի բարենորոգումները պահանջուեցաւ։

Ի՞նչ կրնար եզրակացնել Եըլդիզ–Քիոշկին հրէշը. որ չափազանց թոյլատուութիւն եւ հաւանութիւն կընձեռնէր եւրոպայէն զլուխ հանելու իր մարդասպանութիւնը։ Տեսաւ թէ բռվանդակ եւրոպան կարդելուր Ռուսիան պաշտպանելու հայերը. գերաշանձար ջարդերու մասին ողջոյն եւրոպայի անկարեկցութիւնը նկատեց։ Վերջերս, Գերման կիսյամ կայսրը Երուսաղէմ զանազան եկեղեցեաց Պատրիարքներուն պատուանշաններ բաշխած տեղն միակ հայ Պատրիարքին անչուք նշան մը տուաւ մորթուածներուն նկատմամբ ունեցած թշնամութիւնը ցուցնելու համար. արդեօք քաջալերական մը չէ՞ր այս ոճրագործին համար։ Սուլթանը ըմբռնելու էր այս բանը, եւ այս եղանակով շատ լաւ հասկցաւ։

Մեծ Մարդասպանը Ապտ–Իւլ–Համիտը չէ. Եւրոպան է մեծ Մարդասպանը։ Հայերը քաջարարոյ, ժրաջան, քաղաքակիրթ, քրիստոնեայ մեն. Եւրոպան Պերլինի դաշնագրով հայերու վիճակը բարւոքել յանձն առաւ. Եւրոպան արդ ցրտօրէն կը թողու որ ջնջուին հայերը ըստ որում իր ժողովուրդները վատասիրտ, մատնագիրները կաշառուած եւ իրենց կառավարութիւնները լոկ գրձուած դաւասիրութիւններու վրայ կը խորհրդածեն չար դիտաւորութիւններու համար։

Ի՞նչ ամօթ։

Գրեց՝ ԻԻՐՊԷՆ ԿՕՀԻԼ

Թարգմ. Օրորեն ԱՍՊԱՐ

Պաղէլ. 9 հոկտ.

——)·(——

մութ չէ մի թերթի համար, տեղ տալ այսպիսի անուններ կրող մի մարդու։ Ինչ երկարացնեմ, այսքան անուններ կրող մարդուն արժէ ապրելը։ զէ՞հ յարգելի ընթերցող, միթէ ամօթ չէ մի հասարակութեան, որ ինձ պէս մի մարդու վարձում է տասը երկար տարիներ, իբրեւ դաստիարակ իր որդոց համար։ այն էլ երկու փափուկ առարկաների, որ է կրօն, ազգային և եկեղեցական երգեցողութիւնը։ Մի՞թէ աւելի անբարոյական և ստոր չէ այն հասարակութիւնը, որ տասը տարի դեռ հաց է տալիս և ապրեցնում այսքան անուններ կրող մի մարդու ընտանիք։

Էլ հերիք է, մնացածը թողնումեմ խմբագրութեանդ և ես ինձ միանգամայն յանձնում, բոլոր ծանօթներիս, մանաւորապէս Թաւրիզի ինտելիգէնտ դասակարգի, իմ պաշտօնակիցների և ազգային հոգաբարձուների դատաստանին։ պատրաստ եմ իմ ձեռքովս ինձ գնդակահարելու, եթէ ձեր թերթի թղթակից Միրզան կարողանայ իր իսկական անունով երեւան գալ և հաստատել այդ մեղադրանքներից մէկը։ (*)

Ռափայէլ Մովսիսեանց

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

—

Ազգօգուտ «Իրաւունք»ի գիտնական, մտաւորապէս, բարոյապէս եւ նիւթապէս հարուստ խմբագիրը—իրեն արժանի խմբակով—կրկին հրապարակի վրայ յաղթող հանդիստցաւ (*) հա՛, հա՛, հա՛... ինչպէս տաճկական Սուլթանը իր երկրի ամէն մի կտորը կորցրած միջոցին՝ իրեն յաղթող կայսր է համարում։

Մենք մեր պարտականութիւնը կատարելուց յետոյ՝ սարսափած այդ հուժկու հանճարից ասպարէզ ենք տալիս յաղթական Պ. խմբագրին... Նորից առաջ գնալու, միշտ պատրաստ մնալով, շատ առաջ անցած միջոցին իր առջեւը կտրելու... ուրեմն բարի ճամբայ։

Ա Զ Դ

—

Տեղւոյս ընթերցասիրաց ընկերութեան ներկայ անկերպարան վիճակին վերջ մը տալու համար որոշուած է յառաջիկայ կիրակի 17 հոկտեմբերին ընդհ. ժողով մը կազմել ազգային վարժարանի մէջ կէս օրէն յետոյ ժամը 3ին։ Այս առթիւ կը խնդրենք ամէն պարտաճանաչ հայ երիտասարդներէ որ բարեհաճին ներկայ գտնուիլ յիշեալ ժողովոյն այսպիսի ազգօգուտ ձեռնարկի մը իրագործման նպաստելու համար։

——).(——

(*) Մենք, Միրզայի վրայ վստահութիւն ունինք եւ համոզված ենք որ եթէ նա իր իսկական անունով չէ գրում, իր որոշ եւ յայտնի պատճառները ունի։ Պարսկաստանը Պուլկարիա չէ կամ եւրոպական որեւէ երկիր։

Ծ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մամուրեանի յոբելեանին համար Պոլսոյ ուսուցիչներուն կողմէ, ուսումնական խորհուրդը վայելուչ նուէր մը կը պատրաստէ։ Հայ արուեստագէտ մը, Պ. Խօսկանց 500 տրամ ծանրութեամբ և 45 սանտիմէթր բարձրութեամբ արծաթեայ կոթող մը պիտի պատրաստէ որ գեղարուեստական արտադրութիւն մը պիտի ըլլայ։ Մինչեւ յարդ Կեդրոնական, Պէրպէրեան, Եսայեան Օրթաքէօյի և Մայր վարժարանները իրենց դումարները ղրկած են։ Նուէրը պատչաստելէն յետոյ աւելցած դրամն ալ պիտի նուիրուի յոբելեարին։

— «Սուրհանդակ» կը հաղորդէ թէ Դ. եպս. Իւթիւճեան, Եւրոպայի հայոց հովիւը, բոլոր քաղաքները միացնելու համար կանոնագիր մը պատրաստած է։

— Խառն ժողովոյ վերջին նիստերէն միոյն մէջ՝ Գրիգոր Գարակէօղեան յայտարարեր է թէ, ինք պատրաստ է անմիջապէս որբանոցին շէնքը սկսել, եթէ Պատրիարքարանը վերջնականապէս որոշէ շէնքին տեղը։

— Տօքթ. Լէհման, գերմանացի բրոֆէսօրը, որ Վանայ մէջ և ուրիշ նահանգներ գիտական խուզարկութիւններ կատարած է, Կովկասի ճամբով Պոլիս եկած ըլլալով այցելութիւն տուաւ Պատրիարքին՝ իր բնակարանին մէջ,

— Վանայ հոգեւոր հովիւ Ներսէս եպս. Արսլանեան իր պաշտօնին նկատմամբ նոր տեղեկագիր մը ղրկած է Պատրիարքարան, որ Քաղ. ժողովոյ նկատողութեան պիտի յանձնուի։ Արսլանեան ինչ ինչ խնդիրներ ներկայացուցած է, որոնց կարգադրութենէն կախում ունի, կըսէ, իր պաշտօնավարութեան շարունակութիւնը։

— Բեթերսպուրկի գեղատնտեսական միջազգային ցուցահանդէսէն Պ. Գէորգ Շատինեան իր ցուցադրած պանիրին համար ստացեր է ոսկի մեծ շքադրամ։

— Պ. Զանչեանի հրատարակած «Եղբայրական Օգնութիւն» ժողովածոն այս ամառ արտադրած է 7,340 ռուպլի, որ 7,000ը Պոլիս ղրկուած է, 2,000 ռուպլի արդէն բացուած վեցերորդ որբանոցը պահպանելու համար, և 5,000 ռուպլիով՝ալ 25 որբերու համար եօթերորդ որբանոց մը բանալու համար։

Ուրիշ ռուսահայեր ալ կան քանի մը հազար ռուպլի նուիրող, որոցմէ մինն է երեւելի նկարիչ Յ. Կ. Այվազովսկի։

— Սոֆիայի հայերը կուզեն հոնկէ հեռացնել իր անցեալով ոչ այնքան մաքուր Կարապետ քահանան, որովհետեւ ժողովուրդը երկպառակելու պատճառ կըլլայ եղեր։

Այցելու Պաղճեան վարդապետ Սոֆիա կը գտնուի։

— Սոֆիայի մէջ պէյրութցի ապրապ մը, Ահմէտ պէյ «Ալահ» (Բարեհորոգում) նոր թուրքերէն թերթ՝մը կը հրատարակէ։ Թերթին ուղղութիւնը պիտի ըլլայ պահանջել որ Թուրքիոյ մէջ ընդհանուր բարեհորոգում ներմուծուի։ Այս թերթին մէջ աշխատողներէն մին հայ պիտի ըլլայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլօ-Թրանսվալեան պատերազմը հետզհետէ կը տաքնայ։ Բոէրները կաշխատին ժամանակ առաջ գործ տեսնալ, քանի որ Անգլիական զօրքերը բոլորը հասած չեն։ Ամէն հնարք գործ կը դնեն Անգլիական զօրքերուն արգիլել կարեւոր դիրքեր բռնելու։ Այժմ յաջողութիւնը Թրանսվալցիներուն կողմը կերեւի, այսուամենայնիւ կարեւոր յաղթանակ մը տարած չեն։

— Երեսփոխանական ժողովի մը մէջ նշանաւոր ազատական Պ. Հարկուրտ դատափետեր է պատերազմը։ սակայն յայտարարած է որ ամէն մէկը պիտի աշխատին հայրենիքի պատիւը պաշտպանել։ Երեսփոխանական ժողովը տասը միլիոն անգլիական ոսկի որոշեր է ներկայ պատերազմի համար։

— Բոլոր մեծ պետութիւններու համակրութիւնը Թրանսվալցիներուն կողմն է։

— Գերմանիոյ կայսրը պիտի այցելէ Անգլիոյ թագուհւոյն. դեռ այդ այցելութիւնը չբրած Պոտսդամի մէջ պիտի տեսնուի Ռուսիոյ կայսրին հետ։

— Լոնտոնի լրագիրները կը հաղորդեն թէ՝ Թրանսվալի հպատակ բնիկները, Պալուաներ, Զուլուսներ և Սուազիսներ կըսպառնան ապստամբիլ Թրանսվալի հասարակապետութեան դէմ։

Կըսուի թէ ազատ Օրանժի Պաղուտներն ալ Բոյէրներուն հակառակ են, որու համար Օրանժցիք ստիպուած պիտի ըլլան իրենց ուժերուն մէկ մասը տեղէն չը շարժել։

Ով գիտէ, թէ ասոնք անգլիական խաղեր չեն։ Եթէ հարաւային Ափրիկէի բնիկները ապստամբին Բոյէրներու դէմ, այն ժամանակ Անգլիոյ համար շատ դիւրին կըլլայ խեղդել իր փոքրիկ, թէեւ քաջ հակառակորդները։

— Անգլիացի գիտնականներու խումբ մը հոկտ. 13ին ճամբայ պիտի ելլայ դէպի Հապէշիստան գիտական հետազօտութիւններ ընելու նպատակով։

— «Օրօրդ»ի խմբագիր, հայերու բարեկամ, Պ. Իւրպէն Կոհիէ մենամարտի մէջ վիրաւորեր է ժէնէրալ Մէրսիէի տղան որ Ափրիկէյի զօրքերու մէջ սպայ էր և ուր սեւամորթի մը ուղղը սարճանակի հարուածներով ցրուեր էր։

Պ. Կոհիէ խիստ լեղուով յօդուած մը գրած էր իր թերթին մէջ այդ սպային վրայ, և այդ պատճառով մենամարտի հրաւիրուեցաւ։

— Անգլիա համաձայնած է որ ռուսական սպայակոյտէն գնդապետ մը անգլիական զօրքերուն հետ Թրանսվալ երթայ։ Ռուսիա Թրանսվալի առաջարկած չէ, որովհետեւ Թրանսվալ անկախ պետութիւն մը չի ճանչնար։

— Տրէզդէնի մէջ 2.000 գերմանացիներ մրթինկ մը կազմեր են և Կիյեոմ կայսեր հեռագրեր և խնդրեր են պաշտպան հանդիսանալ Թրանսվալին, որու ազատութիւնը անգլիա կապտել կուզէ։

— Բեթերսպուրկի հոլանտական գաղութէն երեսուն անձեր պիտի մեկնին Թրանսվալի պաշտպանութեանը համար կռուելու։

Ա Զ Դ

—

Համաշխարհական գրական եւ գիտական ամսաթերթը, որ պիտի հրատարակուէր մեր խմբագրութեան տակ եւ ծախքերով, այս ամսոյ սկիզբը, մեզմէ անկախ պատճառներով մէկ ամիսի չափ ուշ լոյս պիտի տեսնէ։ — Աւստրիոյ եւ Պուլկարիոյ միջեւ ճանապարհներու փճանալովը՝ երկաթուղիներու երթեւեկութիւնը դժուարացած լինելով, մեր թերթին տպագրական տառերը՝ մեր կարծած ժամանակէն գրեթէ մէկուկէս ամիս յետոյ մեզ պիտի ժամանեն։

Կը խնդրենք հրատարակել հաճիք այս երկտողը, հայ հասարակութեան եւ մեզ արդէն բաժանորդ գրուիլ փութացողներու ուշ է կասկածանքի տեղի չտալու համար։

Մեր նոր հասցէն է՝

Rédaction «Hamalssaran»
3. Place Monge, 3. Paris

Խմբագիրներ
Յովհ. Շաւարշ Մ. Պաղտասարեան

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

—

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ
Թիւ 389 Իսկիզէ-պաշի

—

Կը վաճառուի ծխախոտ, բօսթայի եւ աղերսագրի ամէն տեսակ բուլեր նաեւ «Շարժում»ը։

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՒԱՔԱՌՈՑ

—

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆրանսոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Զարպհանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ դպրոցական եւ վիպական գրքեր. դրամի փոխարէն կընդունի նաեւ նամակադրոշմ։ Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակադրոշմներու։

ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻՆ

Պուլկարական գործածուած ամէն տեսակ նամակադրոշմներ եւ բաց նամակներ։

Դիմել՝ Մուրաս Երանոսեան (Վառնա)

Печатница „Взаимность“ Варна.